շատ մօտ գաղափարի արդիւնքը դէպի հեռաւոր Ասիա: Սեղանի մի կողմում շարքով նստած էին ճանապարհորդները՝ Կարօն, Սագօն ու Ռափայէլը: Ես, իբրեւ մնացող, նստած էի մստեր Ֆիշերի մօտ: Կարօյի բարերարի քոյրը շաքարից եւ զանազան քաղցրաւենիքից շինել էր տոել մի բիբլիական նշանաբան, որ դրած էր սեղանի վրայ: Մենք ամէնքս ուտում էինք, խմում էինք, նայում էինք այդ շաքարեղէն լեռան վրայ: Կենացները, բարեմաղթութիւնները չափ ու սահման չունէին: Այստեղ վերջին անգամ մեզ երգել տոեցին հայ պանդուխտի երգը: Ճաշը վերջացաւ մստեր Ֆիշերի ճառով, որի մէջ բացատրեց նա գիտութեան բարձր նշանակութիւնը եւ, դառնալով դէպի ճանապարհորդները, խօսեց նրանց, թէ որքան մեծ պարտականութիւններ ունեն նրանք կատարելու թէ՛ դէպի գիտութիւնը եւ թէ՛ դէպի այն ժողովուրդը, որի մէջ գնում են նրանք եւ որը կարօտ է գիտութեան: Կարօն իր ընկերների կողմից պատասխանեց նրա ճառին եւ հանդիսաւոր կերպով ուխտեց, որ թէ՛ ինքը եւ թէ՛ իր ընկերները միշտ հաւատարիմ կը մնան գիտութեան եւ կարդարացնեն իրանց բարերարների ցանկութիւնները: Ճաշից յետոյ մենք ամէնքս կառքերով գնացինք մինչեւ երկաթուղու կայարանը, եւ այնտեղ, համբուրոելով, բաժանոեցանք միմեանցից: Վագոնները շարժոեցան, նրանք դեռ նայում էին լուսամուտներից, ճօճում էին իրանց գլխարկները, իսկ ամերիկացի աղջիկները, երկար կանգնած, իրանց թաշկինակներով ողջոյններ էին ուղարկում նրանց ետեւից:

— Պէտք է ասած, որ մեր երիտասարդները լաւ անուն թողեցին: Նրանք սիրուած էին բոլոր ընտանիքների մէջ, ուր ծանօթութիւններ ունէին. երկար չէին մոռանում նրանց, յիշում էին նրանց խօսքերը, յիշում էին հայ պանդուխտի երգը եւ միշտ հարցնում էին ինձանից, արդեօք նամակ չունե՞մ նրանցից: Բայց անցան ամիսներ, անցաւ աւելի քան մի տարի, ես ոչինչ լուր չունէի: Ես արդէն վերջացրել էի ուսումս, պատրաստւում էի հայրենիք վերադառնալ, երբ Բաթաւիայից ստացայ մի նամակ, որը աւելի մի փոքրիկ գրքոյկ կարելի էր կոչել, քան թէ նամակ: Գրում էր Ռափայէլը: Անկարելի է նկարագրել, թէ որքա՜ն տխրութեամբ կարդացի ես այդ նամակը, որի մէջ իմ ընկերների ամբողջ ապագան փչացած էի տեսնում: Բայց նախքան նամակի բովանդակութեան մասին խօսելը, ես, իբրեւ միջանկեալ, պէտք է յիշեցնեմ քեզ մի փոքրիկ մանրավէպ, որով աւելի հասկանալի կը լինի քեզ նամակի բովանդակութիւնը: Դու, ի հարկէ, չես մոռացել, որ իմ պատմութեան սկզբում ասացի, թէ մստեր Ֆիշերի հետ Ամերիկա գնալու ժամանակ՝ Պարսկաստանից անցանք Աւղանիստան, այնտեղից Հնդկաստան, յետոյ Ամերիկա: Լաւ լսիր: Աւղանիստանից անցնելու միջոցին Քաբուլի մօտակայքում, անապատի մէջ, մեզ